ՀՀ ֆինանսների նախարարություն

2023 ԹՎԱԿԱՆԻ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Հրապարակվել է 22.12.2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1 • Ընդհանուր նկարագրություն

2 • Համախառն ֆինանսական կարիքն ու պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրները

3 • Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման պարտքային գործիքակազմը

3.1 • Պակասուրդի ֆինանսավորումը պետական գանձապետական պարտատոմսերով *(թողարկման, տեղաբաշխման ու հետգնման հիմնական սկզբունքներ ու 2023 թվականի տեղաբաշխման աճուրդների օրացույց)*

3.2 • Պակասուրդի ֆինանսավորումն արտաքին վարկերով *(մասհանումների ծրագիր)*

3.3 • Պակասուրդի ֆինանսավորումը կապիտալի միջազգային շուկաներից ներգրավված փոխառություններով *(եվրապարտատոմսերի տեղաբաշխումներ ու մարումներ)*

4 • Կառավարության պարտքի մարումն ու սպասարկումը

5 • Կառավարության պարտքը **2023** թվականի տարեվերջին

1. Ընդհանուր նկարագրություն

Փոխառությունների տարեկան ծրագրում ներկայացված են փոխառու միջոցների հաշվին ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման ծավալները և կառուցվածքը, 2023 թվականի ընթացքում ՀՀ կառավարության պարտքի մարման և սպասարկման նկարագիրը, ինչպես նաև 2023 թվականի տարեվերջի դրությամբ կառավարության պարտքը և այն բնութագրող ցուցանիշները:

2023 թվականի փոխառությունների տարեկան ծրագիրը մշակվել է կառավարության պարտքի կառավարման 2023-2025 թվականների ռազմավարական ծրագրի նպատակադրումներին, ուղենշային ցուցանիշներին և ՀՀ կառավարության պարտքի նվազեցման 2022-2026 թվականների վերանայված ծրագրին համապատասխան, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի կազմման համար կիրառված մակրոտնտեսական և հարկաբյուջետային շրջանակները:

ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի հիմքում դրված հիմնական ցուցանիշները.

Ցուցանիշներ	2023թ. (պետբյուջե)
ՀՆԱ, մլրդ դրամ	9,317.9
Իրական աճ, %	7.0
ՀՆԱ-ի դեֆլյատոր, %	5.0
Պետական բյուջեի եկամուտներ, մլրդ դրամ	2,302.0
%-ներով ՀՆԱ-ի նկատմամբ	24.7
Պետական բյուջեի ծախսեր, մլրդ դրամ	2,591.0
%-ներով ՀՆԱ-ի նկատմամբ	27.8
Պետական բյուջեի պակասուրդ, մլրդ դրամ	(288.9)
%-ներով ՀՆԱ-ի նկատմամբ	(3.1)
Բյուջետային մուտքերի և ելքերի փոխարկման համար կիրառված ԱՄՆ դոլար / ՀՀ դրամ փոխարժեք	395.2

2. Համախառն ֆինանսական կարիքն ու պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրները

ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի հիմքում դրված հարկաբյուջետային շրջանակի համաձայն՝ համախառն ֆինանսական կարիքը կկազմի 745.2 մլրդ դրամ, մասնավորապես.



Նախատեսվում է համախառն ֆինանսական կարիքի 65.2 տոկոսն ապահովել ներքին աղբյուրներից ներգրավված փոխառու միջոցների հաշվին, իսկ 34.8 տոկոսը՝ արտաքին փոխառությունների հաշվին: Կանխատեսվում է, որ պետական գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխումից մուտքը կկազմի 485.8 մլրդ դրամ, և արտաքին աղբյուրներից ներգրավված վարկերի գծով կիրականացվի 259.4 մլրդ դրամի ֆինանսավորում:

ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի պակասուրդը կկազմի 288.9 մլրդ դրամ և նախատեսվում է այն ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորել 302.8 մլրդ դրամով, իսկ արտաքին աղբյուրների հաշվին՝ (13.9) մլրդ դրամով:

Պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներն են.

Ֆինանսավորման աղբյուրներ, մլրդ դրամ	2023թ. (պետբյուջե)
Ընդամենը	**288.9**
այդ թվում՝	
Ներքին աղբյուրներ	**302.8**
որից	
Փոխառու զուտ միջոցներ	**295.2**
գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխումից մուտքեր	485.8
գանձապետական պարտատոմսերի մարում / հետգնում	(190.6)
մուրհակների մարում	(0.007)
Ֆինանսական զուտ ակտիվներ	**7.6**
վարկերի և փոխատվությունների տրամադրում (զուտ)	(8.1)
ելքերի ֆինանսավորմանն ուղղվող << 2023 թվականի պետական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդի միջոցներ	19.7
կայունացման դեպոզիտային հաշվի համալրում	(4.0)
Արտաքին աղբյուրներ	**(13.9)**
որից	
Փոխառու զուտ միջոցներ	**123.4**
վարկերի և փոխատվությունների ստացում	259.4
նպատակային վարկերի գծով	121.4
բյուջետային աջակցության վարկերի գծով	137.9
ստացված վարկերի և փոխատվությունների մարում	(136.0)
արտարժութային պարտատոմսերի տեղաբաշխումից մուտքեր	-
արտարժութային պարտատոմսերի մարում / հետգնում	-
Ֆինանսական զուտ ակտիվներ	**(137.3)**
վարկերի և փոխատվությունների տրամադրում (զուտ)	(135.6)
բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերում և այլն	(1.6)

3. Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման պարտքային գործիքակազմը

2023 թվականին պետական բյուջեի պակասուրդի զուտ ֆինանսավորումը փոխառու միջոցների հաշվին կկազմի 418.6 մլրդ դրամ, ինչը կիրականացվի պետական գանձապետական պարտատոմսերի հաշվին՝ 295.2 մլրդ դրամ և արտաքին վարկերի հաշվին՝ 123.4 մլրդ դրամ (հաշվի առնելով ստացումների և մայր գումարի մարումների տարբերությունը): Արտարժութային պետական պարտատոմսերի հաշվին ֆինանսավորում չի նախատեսվել:

3.1. Պակասուրդի ֆինանսավորումը պետական գանձապետական պարտատոմսերով

(թողարկման, տեղաբաշխման ու հետգնման հիմնական սկզբունքներ և 2023 թվականի տեղաբաշխման աճուրդների օրացույց)

Պետական գանձապետական պարտատոմսերով բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումն իրականացվելու է կարճաժամկետ (1 տարի), միջնաժամկետ (3 և 5 տարի), երկարաժամկետ (10 և 30 տարի) պարտատոմսերի վերաբացումների և խնայողական (6 ամիս, 1, 2 և 3 տարի) պարտատոմսերի տեղաբաշխման միջոցով:

Յուրաքանչյուր երկու ամիսն առնվազն մեկ անգամ կկազմակերպվի 52, 39, 26 և 13 շաբաթ մինչև մարում ժամկետ ունեցող պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդներ: 6 ամիս մարման ժամկետ ունեցող պետական կարճաժամկետ պարտատոմսերն ուղենշային սահմանելու նպատակով 2024 թվականին մարվող կարճաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխման ենթակա ծավալը կլինի նվազագույնը 5 մլրդ դրամ:

2023 թվականի ապրիլի 29-ին կթողարկվեն 3 և 5 տարի մարման ժամկետայնությամբ նոր միջնաժամկետ պետական գանձապետական պարտատոմսեր: 2023 թվականի ընթացքում կտեղաբաշխվեն 2033 թվականի հոկտեմբերի 29-ին մարման ենթակա (10 տարի) և 2052 թվականի հոկտեմբերի 29-ին մարման ենթակա (30 տարի) երկարաժամկետ պարտատոմսերը, որոնց թողարկումն իրականացվել է համապատասխանաբար 2022 թվականի հոկտեմբերի 29-ին և ապրիլի 29-ին:

3 և 5 տարի մարման ժամկետով պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդի նվազագույն ծավալը, որպես կանոն, 25 մլրդ դրամ է:

10 տարի մարման ժամկետով պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդի նվազագույն ծավալը, որպես կանոն, 40 մլրդ դրամ է:

30 տարի մարման ժամկետով պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդի առավելագույն ծավալը, որպես կանոն, 20 մլրդ դրամ է:

Պետական գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդների օրացույց

Հունվար 2023							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
1							1
2	2	3	4	5	6	7	8
3	9	10	11	12	13	14	15
4	16	17	18	19	20	21	22
5	23	24	25	26	27	28	29
6	30	31					

Փետրվար 2023							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
6			1	2	3	4	5
7	6	7	8	9	10	11	12
8	13	14	15	16	17	18	19
9	20	21	22	23	24	25	26
10	27	28					

Մարտ 2023							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
10			1	2	3	4	5
11	6	7	8	9	10	11	12
12	13	14	15	16	17	18	19
13	20	21	22	23	24	25	26
14	27	28	29	30	31		

Ապրիլ 2023							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
14						1	2
15	3	4	5	6	7	8	9
16	10	11	12	13	14	15	16
17	17	18	19	20	21	22	23
18	24	25	26	27	28	29	30

Մայիս 2023							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
19	1	2	3	4	5	6	7
20	8	9	10	11	12	13	14
21	15	16	17	18	19	20	21
22	22	23	24	25	26	27	28
23	29	30	31				

Հունիս 2023							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
23				1	2	3	4
24	5	6	7	8	9	10	11
25	12	13	14	15	16	17	18
26	19	20	21	22	23	24	25
27	26	27	28	29	30		

Հուլիս 2023							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
27						1	2
28	3	4	5	6	7	8	9
29	10	11	12	13	14	15	16
30	17	18	19	20	21	22	23
31	24	25	26	27	28	29	30
32	31						

Օգոստոս 2023							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
32		1	2	3	4	5	6
33	7	8	9	10	11	12	13
34	14	15	16	17	18	19	20
35	21	22	23	24	25	26	27
36	28	29	30	31			

Սեպտեմբեր 2023							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
36					1	2	3
37	4	5	6	7	8	9	10
38	11	12	13	14	15	16	17
39	18	19	20	21	22	23	24
40	25	26	27	28	29	30	

Հոկտեմբեր 2023							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
40							1
41	2	3	4	5	6	7	8
42	9	10	11	12	13	14	15
43	16	17	18	19	20	21	22
44	23	24	25	26	27	28	29
45	30	31					

Նոյեմբեր 2023							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
45			1	2	3	4	5
46	6	7	8	9	10	11	12
47	13	14	15	16	17	18	19
48	20	21	22	23	24	25	26
49	27	28	29	30			

Դեկտեմբեր 2023							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
49					1	2	3
50	4	5	6	7	8	9	10
51	11	12	13	14	15	16	17
52	18	19	20	21	22	23	24
53	25	26	27	28	29	30	31

կարճաժամկետ պարտատոմսեր

միջնաժամկետ պարտատոմսեր

երկարաժամկետ պարտատոմսեր

Ոչ աշխատանքային օրեր

Հունվարի 1-2	Ամանոր և Ծննդյան տոներ	Ապրիլի 24	Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր	Մայիսի 28	Հանրապետության տոն
Հունվարի 6	Սուրբ Ծնունդ և Հայտնություն	Մայիսի 1	Աշխատանքի օր	Հուլիսի 5	Սահմանադրության օր
Հունվարի 28	Բանակի օր	Մայիսի 9	Հաղթանակի և խաղաղության տոն	Սեպտեմբերի 21	Անկախության տոն
Մարտի 8	Կանանց տոն				

Աճուրդների կողմնորոշիչ ծավալների վերաբերյալ տեղեկատվությունը կիրապարակվի եռամսյակային կտրվածքով, յուրաքանչյուր եռամսյակից 10 օր առաջ:

Յուրաքանչյուր աճուրդին տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի ծավալների (միջակայքի) և ժամկետների վերաբերյալ տեղեկատվությունը կիրապարակվի աճուրդի

ամսաթվին նախորդող ամսվա վերջին տասնօրյակում՝ գործակալների հետ խորհրդակցելուց հետո:

Կարող են իրականացվել պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերի լրացուցիչ թողարկումներ, ընդ որում մինչև 3 շաբաթ մարման ժամկետայնությամբ թողարկումներ կարող են իրականացվել կանխիկ հոսքերի կառավարման նպատակով, իսկ 3-12 շաբաթ մարման ժամկետայնությամբ թողարկումներ՝ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման շրջանակներում:

Ապրիլի 29-ը և հոկտեմբերի 29-ը, որոնց վրա կենտրոնացված են արժեկտրոնային պարտատոմսերի տոկոսավճարներն ու մարումները, հանդիսանում են աճուրդների պահուստային օրեր: Քանի որ 2023 թվականին այդ օրերը ոչ աշխատանքային են, աճուրդների պահուստային օրեր կլինեն մայիսի 2-ը և հոկտեմբերի 30-ը:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, բացառիկ դեպքերում, ելնելով փոխառության կարիքից և շուկայի միտումներից կարող է հայտարարել լրացուցիչ աճուրդի օրեր, չեղարկել աճուրդի օրերը:

2023 թվականի ընթացքում, ըստ անհրաժեշտության, կիրականացվեն նաև պետական գանձապետական պարտատոմսերի հետգնումներ: 2023 թվականի ընթացքում պարտատոմսերի հետգնումների 70-80%-ը կիրականացվեն մարման գրաֆիկի հարթեցման, իսկ 20-30%-ը՝ պարտատոմսերի իրացվելիությունը խթանելու նպատակով: Որպես կանոն, պետական գանձապետական պարտատոմսերի հետգնումները կիրականացվեն միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխումների օրերին: ՀՀ ֆինանսների նախարարությունը յուրաքանչյուր թողարկման պարտատոմսերի տեղաբաշխման ժամանակահատվածում այդ պարտատոմսերի հետգնում չի իրականացնի:

ՀՀ ֆինանսների նախարարության www.minfin.am պաշտոնական կայքում եռամսյակային կտրվածքով, յուրաքանչյուր եռամսյակից 10 օր առաջ, կհրապարակվի ուղենշային համարվող պարտատոմսերի ցանկը:

Յուրաքանչյուր ամսվա նախավերջին հինգշաբթի օրը կկազմակերպվի հանդիպում գործակալների հետ: Յուրաքանչյուր եռամսյակի երրորդ ամսվա երկրորդ հինգշաբթի օրը

կկազմակերպվի հանդիպում պետական պարտատոմսերի շուկայի այլ ինստիտուցիոնալ մասնակիցների հետ:

3.2. Պակասուրդի ֆինանսավորումն արտաքին վարկերով (մասհանումների ծրագիր)

ՀՀ 2023 թվականին պետական բյուջեի պակասուրդը ֆինանսավորելու համար նախատեսվում է արտաքին վարկերի գծով կատարել 259.4 մլրդ դրամի (656.3 մլն ԱՄՆ դոլար) մասհանումներ: Ընդ որում մասհանումներից 121.4 մլրդ դրամը (307.2 մլն ԱՄՆ դոլար) նախատեսվում է կատարել նպատակային վարկային ծրագրերի գծով, իսկ մնացած 137.9 մլրդ դրամը (349.1 մլն ԱՄՆ դոլար)՝ բյուջետային աջակցության վարկերի գծով:

2023 թվականի համար ծրագրավորվել է բյուջետային աջակցության վարկերի ստացումներ Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկից՝ 100 մլն ԱՄՆ դոլար, ՕՊԵԿ հիմնադրամից՝ 50 մլն եվրո, Զարգացման Ֆրանսիական Գործակալությունից՝ 100 մլն եվրո, Ասիական Զարգացման Բանկից՝ 50 մլն ԱՄՆ դոլար, այլ աղբյուրներից՝ 50.1 մլն ԱՄՆ դոլար:

Ըստ վարկատուների մասհանումների կառուցվածքը հետևյալն է.

Մասհանումների կառուցվածքն ըստ վարկատուների (%)



2023 թվականին մասհանումների 53.8%-ը կկատարվի ԱՄՆ դոլարով տրամադրված վարկերի գծով, իսկ 42.3%-ը՝ եվրոյով տրամադրված վարկերի գծով: Ընդ որում,

մասհանումների գերակշիռ մասը՝ 59%-ը, կկատարվի լողացող տոկոսադրույքով վարկերի գծով:





3.3 Պակասուրդի ֆինանսավորումը կապիտալի միջազգային շուկաներից ներգրավված փոխառություններով

2023 թվականին կապիտալի միջազգային շուկաներում պետական արտարժութային պարտատոմսերի նոր թողարկումներ և շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի հետգնումներ չեն նախատեսվում:

4. Կառավարության պարտքի մարումը և սպասարկումը

2023 թվականին կառավարության պարտքի մարման և սպասարկման համար կպահանջվի 599.5 մլրդ դրամ, որից 326.6 մլրդ դրամը կկազմեն պարտքի գծով մարումները, իսկ 272.9 մլրդ դրամը՝ տոկոսավճարները:

մլրդ դրամ	*մարում*	*սպասարկում*	*ընդամենը*
Պետական գանձապետական պարտատոմսեր	190.6[1]	164.5	355.1
Պետական արտարժութային պարտատոմսեր	-	35.9	35.9
Արտաքին վարկեր	136.0	72.6	208.6
Ընդամենը	*326.6*	*272.9*	*599.5*

[1] Ցուցանիշը ներառում է պետական գանձապետական պարտատոմսերի հետգնման համար նախատեսված 30 մլրդ դրամը:

Սպասարկման ծախսերի կառուցվածքը (%)



ՀՀ կառավարության արտարժութային պարտքի սպասարկման և մարման համար նախատեսված միջոցները փոխարկվել են ՀՀ դրամի հիմք ընդունելով 2022թ. նոյեմբերի 1-ի դրությամբ արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքները (կիրառելով համապատասխան ճշգրտման գործակից, քանի որ փաստացի վճարումները կատարվելու են գործարքի օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված վաճառքի փոխարժեքներով) և այն ենթադրությամբ, որ 2023 թվականին միջին SOFR դրույքաչափը կկազմի 5.0%, 6-ամսյա EURIBOR-ը՝ 3%, իսկ SDR-ի տոկոսադրույքը՝ 4.0%:

2023 թվականին կառավարության պարտքի միջին կշռված տոկոսադրույքը կկազմի 6.6%: Կառավարության պարտքի սպասարկման ծախսերը (տոկոսավճարներ) կկազմեն ՀՆԱ-ի 2.9%-ը:

	2021թ.	2022թ.	2023թ.
Կառավարության պարտքի սպասարկում (տոկոսավճար), մլրդ դրամ	180.8	202.1	272.9
%-ներով ՀՆԱ-ի նկատմամբ	2.6	2.4	2.9
Կառավարության պարտքի միջին կշռված տոկոսադրույք, %	4.7	4.8	6.6

Արտաքին վարկերի մարման և սպասարկման գծով նախատեսվում է վճարել 208.6 մլրդ դրամ (527.8 մլն ԱՄՆ դոլար): Նախատեսվող վճարումների կառուցվածքն ըստ վարկատուների հետևյալն է.

մլն ԱՄՆ դոլար	տոկոսավճար	մարում	ընդամենը
Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ	60.4	24.6	85.0
Զարգացման Միջազգային Ընկերակցություն	19.9	72.7	92.6
Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ	2.2	5.3	7.5
Եվրոպական Ներդրումային Բանկ	3.1	6.1	9.2
Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամ	0.5	3.8	4.4
ՕՊԵԿ-ի Միջազգային Զարգացման Հիմնադրամ	4.4	5.4	9.8
Ասիական Զարգացման Բանկ	41.5	54.2	95.7
Եվրամիություն	2.4	-	2.4
Արժույթի Միջազգային Հիմնադրամ	15.6	72.7	88.3
Եվրասիական Զարգացման Բանկ	8.3	1.5	9.9
Գերմանիա (ՎՎԲ)	6.8	29.7	36.5
Ռուսաստանի Դաշնություն	10.2	44.1	54.3
Ֆրանսիա	5.6	9.4	15.0
ԱՄՆ	0.2	1.9	2.1
Ճապոնիա	1.3	8.4	9.7
Աբու-Դաբիի Զարգացման Հիմնադրամ	0.1	0.7	0.8
Չինաստանի Արտահանման-Ներմուծման Բանկ	0.4	1.6	2.0
ԿԲՍ Բանկ (Բելգիա)	0.0	0.5	0.5
Ռայֆայզն Բանկ (Ավստրիա)	0.0	0.9	1.0
Էռստե Բանկ (Ավստրիա)	0.1	0.7	0.8
Ենթակա է հստակեցման	0.5	-	0.5
Ընդամենը	**183.7**	**344.0**	**527.8**

Պետական արտարժութային պարտատոմսերի սպասարկման ծախսերը 2023 թվականին կկազմեն 90.8 մլն ԱՄՆ դոլար՝ շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի արժեկտրոնային վճարումների համար:

5. Կառավարության պարտքը 2023 թվականի տարեվերջին

Ըստ կանխատեսումների՝ 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կառավարության պարտքը կկազմի 4,645 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 49.8 տոկոսը և 2022 թվականի տարեվերջի համեմատությամբ ՀՆԱ-ի նկատմամբ կնվազի 0.3 տոկոսային կետով: Կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի նշված կանխատեսումները տարբերվում են կառավարության պարտքի կառավարման 2023-2025 թվականների միջնաժամկետ ռազմավարական ծրագրով սահմանված ցուցանիշներից՝ պայմանավորված հիմնականում կանխատեսումներում

կիրառված մակրոտնտեսական ու հարկաբյուջետային շրջանակի, փոխարժեքների տարբերություններով ու կառավարության պարտքի գծով փաստացի գործառնություններով:

	31.12.2021թ.	31.12.2022թ.	31.12.2023թ.
ՀՀ կառավարության պարտք, մլրդ դրամ	4,210	4,158	4,645
ՀՀ կառավարության պարտք, % ՀՆԱ-ի նկատմամբ	60.3	50.1	49.8

Նախատեսվում է 2022-2023 թվականներին կառավարության պարտքի կառուցվածքում ավելացնել դրամային պարտքի կշիռը համապատասխանաբար 7.4 և 3.1 տոկոսային կետով: Կառավարության պարտքը կունենա հետևյալ կառուցվածքը.









	31.12.2021թ.	31.12.2022թ.	31.12.2023թ.
Կառուցվածքն ըստ ռեզիդենտության, մլրդ դրամ*			
ներքին պարտք	1,237	1,655	1,970
արտաքին պարտք	2,972	2,503	2,675
Կառուցվածքն ըստ գործիքակազմի, մլրդ դրամ			
արտաքին վարկեր և փոխառություններ	2,152	1,891	2,051
պետական գանձապետական պարտատոմսեր	1,209	1,496	1,824
արտարժութային պետական պարտատոմսեր	*840*	*760*	*764*
արտաքին երաշխիքներ	*4*	*3*	*3*
ներքին երաշխիքներ	5	7	3
Արժութային կառուցվածքը, մլրդ դրամ			
ՀՀ դրամով արտահայտված պարտք	1,214	1,503	1,827
արտարժույթով արտահայտված պարտք	2,996	2,655	2,818
Կառուցվածքն ըստ տոկոսադրույքի տեսակի, մլրդ դրամ			
լողացող տոկոսադրույքով	718	727	834
ֆիքսված տոկոսադրույքով	3,492	3,430	3,811

* 2022 և 2023 թվականների համար պետական գանձապետական և արտարժութային պարտատոմսերի գծով պարտքի մնացորդը բաշխվել է ըստ ռեզիդենտության հիմք ընդունելով 2022թ. հոկտեմբերի 31-ի դրությամբ փաստացի ձևավորված տեսակարար կշիռները:

Հաշվի առնելով ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի հիմքում դրված կանխատեսումները և պարտքի գծով ծրագրավորված գործառնությունները, ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2023-2025 թվականների ռազմավարական ծրագրով ամրագրված ուղենշային ցուցանիշները 2023թ. տարեվերջի դրությամբ կկազմեն.

	Ուղենիշ	2021թ.	2022թ. (կանխ.)	2023թ. (կանխ.)
Վերաֆինանսավորման ռիսկ				
Մինչև մարում միջին ժամկետը	7 – 10 տարի	8.4 տարի	7.6 տարի	7.4 տարի
Առաջիկա տարվա ընթացքում մարվող պետական գանձապետական պարտատոմսերի (ՊԳՊ) առավելագույն կշիռը ՊԳՊ-երի ծավալի մեջ (տարեվերջին)	առավե-լագույնը 20%	12.2%	12.3%	10.1%
Տոկոսադրույքի ռիսկ				
Ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 80%	82.9%	82.5%	82.0%
Փոխարժեքի ռիսկ				
Ներքին պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 30%	29.4%	39.8%	42.4%
ՀՀ դրամով ներգրավված պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 30%	28.8%	36.2%	39.3%

2023 թվականի տարեվերջի դրությամբ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի 35.7%-ը բաժին կընկնի Համաշխարհային Բանկին (Զարգացման Միջազգային Ընկերակցություն ու Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ): Կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքն ըստ վարկատուների կլինի հետևյալը.



2023 թվականի տարեվերջի դրությամբ ձևավորվող կառավարության պարտքի մարման ժամանակացույցը սփռված կլինի մինչև 2054 թվականը և կունենա հետևյալ տեսքը.